ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 24-Հ

«20» 02 2025 թ. ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 27-Ի N 47 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության դատախազության բնականոն գործունեությունն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ՀՀ դատախազության ֆինանսատնտեսական վարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պարետի 1 հաստիքը ՀՀ գլխավոր դատախազության միջազգային-իրավական համագործակցության վարչության պետի տեղակալի 1 հաստիքով փոխարինելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ և 7-րդ կետերով, 30-րդ հոդվածի 3-րդ մասով՝

Հրամայում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2022 թվականի հունիսի 27-ի՝ «Հայաստանի Հանրապետության դատախազության հաստիքացուցակը սահմանելու և Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի 2021 թվականի նոյեմբերի 22-ի N 91 հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 47 հրամանում (այսուհետ՝ Հրաման) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 1-ին հավելվածի 2-րդ բաժնի 15-րդ գլխի 54-րդ կետի «Վարչության պետի տեղակալ 1» բառերը փոխարինել «Վարչության պետի տեղակալ 2» բառերով, «Ընդամենը՝ 7» բառերը՝ «Ընդամենը՝ 8» բառերով, իսկ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 139» բառերը՝ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 140» բառերով, 6-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 139» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում դատախազների թիվը 140» բառերով, իսկ «Ընդամենը Հայաստանի Հանրապետության

դատախազությունում դատախազների թիվը 446» բառերը՝ «Ընդամենը Հայաստանի Հանրապետության դատախազությունում դատախազների թիվը 447» բառերով:

2) 2-րդ հավելվածի 1-ին բաժնի 3.3-րդ գլխի 15.1-րդ կետի «Պարետ 24» բառերը փոխարինել «Պարետ 23» բառերով, «Ընդամենը՝ 35» բառերը՝ «Ընդամենը՝ 34» բառերով, «Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 48» բառերը՝ «Ընդամենը՝ Ֆինանսատնտեսական վարչությունում 47» բառերով, 25-րդ գլխի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 148» բառերը՝ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 147» բառերով, իսկ 5-րդ բաժնի «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 148» բառերը փոխարինել «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությունում 147» բառերով, իսկ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում 285» բառերը՝ «Ընդամենը՝ Հայաստանի Հանրապետության դատախազությունում 282» բառերով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

3. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, Երևան քաղաքի, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա.ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**